

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
6-01.49.01 «ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
6-01.49.01.01-4 «ՄԵՂՎԱԲՈՒՅԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

**Ուսումնական ՊԼԱՆ ԵՎ  
ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ**

**Ե Ր Ե Վ Ա Ն – 2013**



### III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՊԼԱՆԸ

	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը ( ժամ)				Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների				
		Քնն.	Ստ.	Կուրս աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն				2-րդ կուրս		3-րդ կուրս		
					Ընդ.	Այդ թվում			3-րդ կիս. 15 շաբաթ	4-րդ կիս. 13 շաբաթ	5-րդ կիս. 10 շաբաթ	6-րդ կիս. 9 շաբաթ	
						Տեսակ. ուսուց.	Լաբոր. և գործ. աշխ.	Սեմինար պարապմ.					
<b>1.</b>	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ</b>												
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		3, 4 տ		72	54	18		36	36			
1.2	Տնտեսագիտության հիմունքներ		3, 4 տ		54	36	14	4	30	24			
1.3	Օտար լեզու		3, 4 տ		72	12	60		36	36			
1.4	Ռուսաց լեզու		3, 4 տ		72	12	60		36	36			
1.5	Պատմություն		3, 4 տ		54	42	12		30	24			
1.6	Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ		4 տ		36	24	12			36			
1.7	Իրավունքի հիմունքներ		5 տ		36	24	8	4			36		
1.8	Քաղաքագիտություն և սոցիոլոգիայի հիմունքներ		6 տ		54	54					40	14	
1.9	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		5 տ		18	18					18		
1.10	Ֆիզիկական կուլտուրա		3 - 6 տ		94	-	94		30	26	20	18	
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>562</b>	<b>276</b>	<b>278</b>	<b>8</b>	<b>198</b>	<b>218</b>	<b>114</b>	<b>32</b>	
<b>2.</b>	<b>ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>												
2.1	Հաղորդակցություն		3 տ		36	8	28		36				
2.2	Անվտանգություն և առաջին օգնություն		3 տ		36	20	16		36				
2.3			3, 4		54	12	42		30	24			

	Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ											
2.3	Համակարգչային օպերատորություն		6 տ	72	16	56				60	12	
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>			<b>198</b>	<b>56</b>	<b>142</b>			<b>102</b>	<b>24</b>	<b>60</b>	<b>12</b>
<b>3.</b>	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>											
3.1	Մեղվաբուծության զարգացման պատմությունը և միտումները		3 տ	54	38	16			54			
3.2	Մեղուների կենսաբանությունը և կանսատարածքի էկոլոգիան	3		90	60	30			90			
3.3	Մեղվաընտանիքների կազմը	3		54	34	20			54			
3.4	Մեղվաբուծության կերային բազան		3 տ	42	24	18			42			
3.5	Մեղվաբուծության սանիտարահիգիենիկ նորմերը		4 տ	36	16	20				36		
3.6	Մեղվաբուծության գույքը, գործիքները և սարքավորումները	4		36	12	24				36		
3.7	Մեղվամթերքների ապրանքագիտական գնահատումը		4 տ	54	34	20				54		
3.8	Մեղվաբուծական աշխատանքների կազմակերպումը	4		54	26	28				54		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>			<b>420</b>	<b>244</b>	<b>176</b>			<b>240</b>	<b>190</b>		
<b>4.</b>	<b>ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>											
4.1	Մեղվաընտանիքների խնամքը	5		72	24	48				72		
4.2	Մեղվաբուծության մեթոդները և մեղուների բազմացումը		5 տ	54	24	30				54		
4.3	Մեղուների վնասատուները և հիվանդությունները		5 տ	36	26	10				36		
4.4	Մեղվամթերքների արտադրության տեխնոլոգիան	6		36	16	20					36	
4.5	Մեղրի հատկությունները, արտադրությունը և պահեստավորումը	6		72	28	44					72	
4.6	Ակնամուկի և ծաղկափոշու հատկություններն ու արտադրությունը		6 տ	36	16	20					36	
4.7	Մեղվամուկի, մայրակաթի և մեղվաթույնի հատկություններն ու արտադրությունը		6 տ	54	24	30					54	
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>			<b>360</b>	<b>160</b>	<b>200</b>				<b>162</b>	<b>198</b>	

6.	ԸՆՏՐՈՎԻ				72					36		36
7.	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ				80						24	56
									540	468	360	324
8.	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				200							
	Շաբաթվա ժամերի քանակը								36	36	36	36

IV. ՆԱԽԱՄԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՔԻՆԵՏՆԵՐԻ < ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Վարվելակերպի հիմունքներ				
2	Ձեռնարկատիրության հիմունքներ			1	հայոց լեզվի
3				2	օտար լեզուների և լինգաֆոնային
4				3	ընդհանուր հումանիտար առարկաների
				4	կենսագործունեության անվտանգության և առաջին օգնության
	<b>V. ՊՐԱԿՏԻԿԱ</b>	Կիսամյակ	Շաբաթ	5	համակարգչային
1	Արտադրական	4, 5, 6	20	6	լանդշաֆտագիտության և էկոլոգիայի
2	Ուսումնական	4, 6	5	7	մեղվաբուծության
					<b>ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ</b>
				1	մեղուների և մեղվաընտանիքների կենսաբանության
				2	մեղվաբուծական գույքի և մեղվանոցային սարքավորումների
				3	անասնաբուժական սանիտարիայի
					<b>ԱՐՀԵՍԱՆՈՑՆԵՐ</b>
				1	փայտամշակման և մեղվափեթակների պատրաստման տեխնոլոգիայի
					<b>ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ</b>
				1	մարզադահլիճ
				2	մարզահրապարակ
<b>VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ</b>					
Պետական քննություն ընդհանուր մասնագիտական մոդուլներից /հունիսի 22 –ից հունիսի 28-ը շրջանում/					
Պետական քննություն հատուկ մասնագիտական մոդուլներից /հունիսի 29 –ից հուլիսի 5-ը շրջանում/					

### VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորված առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի կամ մոդուլի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է հաստատության խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է հաստատությունը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է հաստատությունը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»**

<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ՀՂԿ-5-13-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունները:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական պարապմունք՝ 28 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2. կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը, 3. կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը, 4. ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում, 5. խթանի համագործակցության ձևավորմանը, շարունակական գործընկերության համար ստեղծի նախապայմաններ:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունն անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, բ. ճիշտ է ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերն ու բաղադրիչները,

	<p>գ. ճիշտ է ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակներն ու բաղադրիչները,</p> <p>դ. շփման հնարավորությունը ճիշտ է ուղղորդում նպատակային հաղորդակցմանը,</p> <p>ե. անձնական հատկանիշները ճիշտ է օգտագործում գործնական հաղորդակցության մեջ:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,</p> <p>բ. բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին,</p> <p>գ. հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնելով հստակ և նպատակային խոսք,</p> <p>դ. ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում հետաքրքրություններ և հաճոյախոսում,</p> <p>ե. մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ պատրաստել զեկույց և հաղորդում, կառաջադրվեն թեմատիկ քննարկումներ, որոնց ընթացքում ուսանողը հանդես կգա իր</p>



	<p>հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը</p>
	<p>ա. ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, բ. կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, գ. նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլ տեխնիկական միջոցներ, դ. կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, ե. վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, զ. բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, է. գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և</p>

	<p>ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, քննարկման ենթակա մշակված թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի, զրուցակցի կամ հասցեատիրոջ, բ. ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, գ. առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, ե. ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ, զ. պահպանում և եզրափակում է երկխոսությունը, դ. կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվեն գործնական աշխատանքներ՝ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվեն իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու</p>

	պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5.</b>	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն), բ. հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվություն, գ. հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար, դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, ե. հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն, զ. ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում են համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և դրանք օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվեն իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը,

	նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակը: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, դերային խաղերի և տարատեսակ այլ սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ԱԱՕ-5-13-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ տեսական ուսուցում՝ 20 ժամ գործնական պարապմունք՝ 16 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2. կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ, 3. ցուցաբերի առաջին օգնություն:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները

<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>ա. ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,</p> <p>բ. ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները,</p> <p>ե. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անվտանգության հիմնական կանոնների, դրանց պահպանման անհրաժեշտության և չպահպանելու դեպքում հնարավոր հետևանքների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշակի բնագավառի (աշխատավայրի) համար ներկայացնել անվտանգության կանոնների առանձնահատկությունները, համեմատել առնվազն երկու բնագավառ: Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. անվտանգության հիմնական կանոններն՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի,</li> <li>2. տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,</li> <li>3. հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,</li> <li>4. էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը:</li> <li>5. կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները:</li> </ol> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված</p>

	թեմաներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, բ. ճիշտ է ներկայացնում արտադրական վթարների կանխման աշխատանքները, գ. ճիշտ է ներկայացնում առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, դ. ճիշտ է ներկայացնում կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումներ բաղադրիչները: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ցուցաբերել առաջին օգնություն

<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում առաջին օգնության գործողությունների քայլերը,</p> <p>գ. ճիշտ է կատարում արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողությունը,</p> <p>դ. ճիշտ է կատարում արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողությունը,</p> <p>ե. ճիշտ է կատարում այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողությունները,</p> <p>զ. ճիշտ է կատարում վիրակապման և անշարժացման գործողությունը՝ տարբեր կտրվածքների դեպքում,</p> <p>է. ճիշտ է ներկայացնում տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր առաջին օգնության հիմնական կանոնների և գործողությունների վերաբերյալ: Կհանձնարարվի ցուցադրել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը «Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Ո Ւ Թ Յ Ա Ն Ը Ն Դ Ա Ն Ո Ր Հ Մ Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ԱԳՀ-5-13-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների

	<p>ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային մշակույթ ու էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու ու համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>54 ժամ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական պարապմունք՝ 42 ժամ</p>
<b>Մուտքային պահանջները</b>	<p>Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:</p>
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. փնտրի և գտնի աշխատանք,</li> <li>2. հարմարվի աշխատանքային միջավայրին, ապահովի աշխատանքային դրական մթնոլորտ,</li> <li>3. արդյունավետ աշխատի թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը,</li> <li>4. ներկայացնի աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	<p>Փնտրել և գտնել աշխատանք</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները, բ. կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղը (երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV), դ. ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը, ե. ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:</p>



<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային իրավահարաբերություններ ծագման հիմքերի, կողմերի իրավունիքների և պարտականությունների, պայմանագրային հարաբերություններ ձևավորելու նախապայմանների, աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերի վերաբերյալ: Կհանձնարարվի փնտրել ուսանողի ապագա որակավորմանը համապատասխան հավանական աշխատատեղ(եր)՝ օգտվելով տարբեր բազաներից, վերլուծել հավաքագրված տվյալները և պլանավորել աշխատանքի ընդունվելու իր գործողությունները: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում ուսանողը կկազմի ինքնակենսագրություն (CV) և կներկայացնի իր մասնագիտական ուժեղ կողմերը՝ հիմնավորելով և լինելով համոզիչ՝ տվյալ աշխատատեղում իր համապատասխանության հարցում: Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում է բոլոր հանձնարարությունները և առաջադրանքները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում է են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների վերաբերյալ նորմատիվ ակտեր (աշխատանքային օրենսգիրք, պայմանագրեր և այլն), տեղեկատվական բազաներ (համակարգիչ, բուկլետներ և այլն), մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները, բ. հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը, գ. ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ, դ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ, ե. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:

<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային կարգապահության, աշխատավայրի կառուցվածքի և ստորաբաժանումների, աշխատավայրի տեխնիկական պայմանների և աշխատանքային գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող այլ պահանջների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում «նորանշանակ աշխատողը» պետք է կարողանա ցուցաբերել արդյունավետ հաղորդակցման կարողություն, շփվել գործընկերային միջավայրում, հաղթահարել տարբեր տրամադրվածություններ, որով հնարավոր կլինի գնահատել նոր աշխատակցի պատրաստակամությունը և պատասխանատվության զգացումը: Նշված իրավիճակում դիտարկվում է նաև ուսանողի ուշադիր լսելու և հասկանալու կարողությունները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների և կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p>Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>ա. ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը, բ. ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները, գ. դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման, դ. առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում, ե. կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կազմակերպության և թիմային նպատակի սահմանման, թիմային աշխատանքի հիմնական</p>

	<p>սկզբունքների և խնդիրների լուծման մեթոդների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում ուսանողը, որպես աշխատակից, պետք է կողմնորոշվի աշխատանքային պարզ հարաբերություններում առաջացած բարեկամական կամ վիճահարույց իրավիճակներում՝ պահպանելով պատշաճությունը և հարգալից տոնը: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում գործընկերների վարքագծերի տարբեր դրսևորումների պայմաններում ուսանողը առաջադրում է թիմային շահից ելնող լուծումներ: Վարքագծային դրսևորումների օրինակներ կարող են հանդիսանալ անձնական անհարգալից վերաբերմունքը, աշխատանքային պարտականությունների կատարման թերացումները կամ անտարբերությունները, անձնական հատկանիշների գերադրում կամ ստորադասում, թիմային զգացողության բացասական գերակայությունը և այլն: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 4</b></p>	<p>Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>ա. բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, բ. բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, գ. բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում, դ. ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:</p>

	<p>Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային գործունեության ընթացքում կարգապահության, պատասխանատվության, մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման, նախաձեռնողականության և նպատակասլացության, ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորության վերաբերյալ: Վարվելակերպի նշված կետերի կարևորության ընկալումն ուսանողի մոտ կդիտարկվի նաև գործնական ուսուցման գործընթացում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ</p>
<b>ՄՈԴՈՒԽ ԱՆՎԱՆՈՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕԳԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ՀՕ-5-13-001
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի , գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>72 ժամ տեսական ուսուցում՝ 16 ժամ գործնական պարապմունք՝ 56 ժամ</p>
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

	<p>1.տիրապետի համակարգչային տեխնիկային և կիրառի օպերացիոն համակարգը,</p> <p>2.խմբագրի և ֆորմատավորի տեքստերը,</p> <p>3.պատրաստի և խմբագրի աղյուսակները,</p> <p>4.կատարի գրաֆիկական խմբագրում և նկարազարդում,</p> <p>5.կազմակերպի ցուցադրություն համակարգչային ծրագրերով,</p> <p>6.աշխատի համացանցում:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին,</p> <p>բ. տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին,</p> <p>գ. տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերին (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն),</p> <p>դ. ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,</p> <p>ե. ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office),</p> <p>զ. կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,</p> <p>է. օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,</p> <p>ը. ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում</p> <p>թ. կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print) :</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվեն

	<p>առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունը. թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, բ. մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, գ. կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը՝ տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, դ. կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից, ե. կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիր՝ ըստ առաջադրանքի, կատարել տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու, տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>

<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստում դրանք, բ. կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ, գ. կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուններ և այլն) դ. փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում, ե. ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիր՝ ըստ առաջադրանքի, կատարել աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական գործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Գրաֆիկական խմբագրում և նկարագարում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ, բ. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, գ. գծագրում է կանոնավոր պատկերներ,

	<p>դ. ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով,</p> <p>ե. խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,</p> <p>զ. գծագրում է տեքստային բլոկներ,</p> <p>է. կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիր՝ ըստ առաջադրանքի, կատարել գրաֆիկական օբյեկտներ, կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկներ գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	<p>Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը,</p> <p>գ. մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և կատարում պարզ գործողություններ,</p> <p>դ. ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,</p> <p>ե. կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար,</p> <p>ե. ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի, օգտվելով պատուհանային կառուցվածքից, նախապատրաստել ցուցադրական ծրագիր, կատարել թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, աղյուսակային և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում: Կառաջադրվի</p>



	ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել՝ պահպանելով թեմայի տրամաբանական կապն ու հաջորդականությունը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Աշխատել համացանցում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ներկայացնում է «համացանց» հասկացությունը, բ. օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը, գ. ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը, դ. փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից), ե. կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները, զ. գրանցվում է էլեկտրոնային փոստում, ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում, է. օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացի (հաղորդագրություն, նամակ և կցորդ):
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածքը, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի նաև մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԵՂ - 5 - 13 - 001
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է՝ ուսանողի մեջ ձևավորել մասնագիտական գիտելիքներ մեղվաբուծության զարգացման ընթացքը, տեղն ու դերը համաշխարհային տնտեսության և ՀՀ գյուղատնտեսության կառուցվածքներում գնահատելու վերաբերյալ: Ուսանողը պետք է բավարար տեղեկացված լինի համաշխարհային մեղվաբուծության անցած պատմական ուղու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մեղվաբուծության ներկա վիճակի և զարգացման միտումների մասին:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ տեսական ուսուցում՝ 38 ժամ գործնական պարապմունք՝ 16 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. Ներկայացնի մեղվաբուծության ձևավորման հիմքերը, զարգացման պատմական ընթացքը և միտումները: 2. Մեկնաբանի մեղվաբուծության տեղը, դերը և նշանակությունը գյուղատնտեսության կառուցվածքում: 3. Ներկայացնի Հայաստանի Հանրապետության մեղվաբուծության ընդհանուր պատկերը: 4. Ներկայացնի մեղվաբուծական արտադրատեսակները (մեղվամթերքները):
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել մեղվաբուծության ձևավորման հիմքերը, զարգացման պատմական ընթացքը և միտումները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում մեղվաբուծության, որպես զբաղմունքի՝ ձևավորման նախադրյալները և նախահայրենիքը,

	<p>2) ճիշտ է բնութագրում մեղվաբուծության զարգացման պատմական ընթացքը և ներկան,</p> <p>3) ճիշտ է մեկնաբանում մեղվաբուծության զարգացման միտումները և դրանց առանձնահատկությունները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում մեղվաբուծության կապը տնտեսության այլ ոլորտների և ճյուղերի հետ:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել մեղվաբուծության ձևավորման հիմնական նախադրյալները, զարգացման պատմական ընթացքի փուլերը, ժամանակակից միտումները և դրանց հիմնական առանձնահատկությունները: Կառաջադրվի նաև ներկայացնել մեղվաբուծության կապը տնտեսության այլ ճյուղերի հետ և բերել օրինակներ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային առաջադրանքների 2/3-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Մեթոդաբանական հենքում պետք է նկատի ունենալ տեսական պարապմունքներ, թեմատիկ քննարկումներ ու բանավեճեր, ուսումնամեթոդական գրականության կոնսպեկտավորում, զեկույցների և ռեֆերատների պատրաստում, տեսանյութերի վերլուծություն: Անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ տեսաերիզներ, ցուցապաստառներ, գծապատկերներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Մեկնաբանել մեղվաբուծության տեղը, դերը և նշանակությունը գյուղատնտեսության կառուցվածքում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է բացատրում մեղվաբուծության տեղը և դերը գյուղատնտեսության կառուցվածքում,</p> <p>2) ճիշտ է առանձնացնում մեղվաբուծությամբ աշխարհի առավել մասնագիտացած տարածաշրջանները և առաջատար պետությունները,</p> <p>3) ճիշտ է մեկնաբանում մեղվաբուծության շահութաբերության հիմնական ցուցանիշները և դրանց տարբերություններն ըստ ՀՀ մարզերի,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում մեղվամթերքների արտահանման ծավալը և գլխավոր բեռնահոսքերը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի բացատրել մեղվաբուծության տեղը և դերը տնտեսության, մասնավորապես, գյուղատնտեսության կառուցվածքում՝

	առանձնացնելով մեղվաբուծությամբ աշխարհի առավել մասնագիտացած տարածաշրջաններն ու առաջատար պետությունները: Կառաջադրվի մեկնաբանել մեղվաբուծության շահութաբերության հիմքերը և հիմնական ցուցանիշները, ինչպես նաև դրանց տարբերություններն ըստ ՀՀ մարզերի ու վերընթաց լանդշաֆտային գոտիների: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային առաջադրանքների 70 %-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Մեթոդաբանության հիմքում պետք է լինեն տեսական պարապմունքներ, թեմատիկ քննարկումներ ու բանավեճեր, ուսումնամեթոդական գրականության կոնսպեկտավորման հանձնարարականներ, զեկույցների և ռեֆերատների պատրաստում, տեսանյութերի վերլուծություն: Անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ տեսաֆիլմեր, ցուցապաստառներ, գծապատկերներ, ՀՀ և աշխարհի վարչական, ֆիզիկական, ու կլիմայական քարտեզներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել Հայաստանի Հանրապետության մեղվաբուծության ընդհանուր պատկերը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում մեղվաբուծության տեղը ՀՀ ազգային տնտեսության, մասնավորապես, ագրոարդյունաբերական համալիրի ներկայիս կառուցվածքում, 2) ճիշտ է ներկայացնում ՀՀ մեղվաբուծական մասնագիտացված տարածաշրջանները, արդի առաջատար տոհմային տնտեսությունները և դրանց կողմից թողարկվող հիմնական մեղվամթերքները, 3) ճիշտ է ներկայացնում ՀՀ-ում ստացված և մթերված մեղվամթերքների սպառման արտաքին շուկաները՝ միաժամանակ բնութագրելով պահանջարկի ու գնային փոփոխությունների միտումները ներքին շուկայում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի կամ թեստերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել մեղվաբուծության տեղը ՀՀ ազգային տնտեսության, մասնավորապես, ագրոարդյունաբերական համալիրի ներկայիս կառուցվածքում: Կառաջադրվի ներկայացնել ՀՀ մեղվաբուծական մասնագիտացված տարածաշրջանները, արդի առաջատար տոհմային տնտեսությունները և դրանց կողմից թողարկվող հիմնական մեղվամթերքները՝ միաժամանակ բնութագրելով պահանջարկի ու գնային փոփոխությունների միտումները ներքին

	<p>շուկայում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային առաջադրանքների 2/3-ից ավելին:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Մեթոդաբանական հիմնական զինանոցը պետք է հենված լինի տեսական պարապմունքների, թեմատիկ քննարկումների ու բանավեճերի, ուսումնամեթոդական գրականության կոնսպեկտավորման, զեկույցների և ռեֆերատների պատրաստման, տեսանյութերի վերլուծության վրա: Անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ տեսաֆիլմեր, ցուցապաստառներ, տարաբնույթ գծապատկերներ, ՀՀ վարչական ու ֆիզիկական քարտեզներ, ուսումնական ատլասներ:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 4</b></p>	<p>Ներկայացնել մեղվաբուծական արտադրատեսակները (մեղվամթերքները)</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է թվարկում մեղվամթերքների հիմնական տեսակները,</li> <li>2) ճիշտ է բնութագրում մեղվամթերքների ընդհանուր սննդային հատկանիշները,</li> <li>3) ճիշտ է բնութագրում հրուշակեղենի արդյունաբերության մեջ մեղրի կիրառման ոլորտները,</li> <li>4) ճիշտ է բնութագրում դեղորայքի արդյունաբերության մեջ մեղվաթույնի կիրառման ոլորտները,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում մեղվամթերքներից որոշների դերը մարդու օրգանիզմի ընդհանուր կենսագործունեության հարցում:</li> </ol>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի կամ գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի թվարկել մեղվամթերքների հիմնական տեսակները, բնութագրել դրանց ընդհանուր սննդային հատկանիշները, հրուշակեղենի և դեղորայքի արդյունաբերության մեջ մեղրի կիրառման ոլորտներն ու հեռանկարները: Կառաջադրվի ներկայացնել մեղվամթերքների դերը մարդու օրգանիզմի ընդհանուր կենսագործունեության հարցում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստերի կամ գործնական հանձնարարությունների 80 %-ից ավելին:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Մեթոդաբանական հիմնական զինանոցը պետք է հենված լինի տեսական պարապմունքների, քննարկումների ու բանավեճերի, զեկույցների և ռեֆերատների պատրաստման վրա: Անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ տեսաֆիլմեր,</p>

	ցուցապաստառներ, տարաբնույթ գծապատկերներ, հրուշակագործական բաղադրագրեր և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՂՈՒՆԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՆՍԱՏԱՐԱԾՔԻ ԷԿՈԼՈԳԻԱՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԵՂ - 5 - 13 - 002
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է՝ ուսանողի մեջ ձևավորել ընդհանուր գիտելիքներ մեղունների կենսաբանությունը բնութագրող տեսական հարցերի շրջանակի մասին, ինչպես նաև զարգացնել մասնագիտական կարողություններ՝ նրանց կենսական միջավայրի պայմանները բնութագրելու և դրանք կարգավորելու կամ ուղղորդելու վերաբերյալ: Ուսանողը պետք է գիտենա մեղունների ցեղատեսակները, դրանց տարածման շրջանները, կենսաձևի և բնակության միջավայրի առանձնահատկությունները (էկոլոգիան), դրսևորի մասնագիտական կարողություններ՝ մեղվաընտանիքի առանձնյակների կյանքի սեզոնային պարբերականությանը համապատասխան կենսապայմանների ապահովման վերաբերյալ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	90 ժամ տեսական ուսուցում՝ 60 ժամ գործնական պարապմունք՝ 30 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի մեղունների տեղը միջատների դասում, 2. ներկայացնի մեղունների մարմնի կառուցվածքային (մորֆոլոգիական) առանձնահատկությունները, 3. բնութագրի մեղունների ֆիզիոլոգիան, 4. ներկայացնի մեղունների կենսաձևը, 5. գնահատի մեղրատու բույսերի (մեղրատուների) հանդակների լանդշաֆտային կարողությունը, 6. ներկայացնի մեղունների կենսական տարածքների աղտոտման պատճառները, դրսևորումները և դրանց դեմ պայքարի հիմնական միջոցառումները:

<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել մեղուների տեղը միջատների դասում
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է նկարագրում միջատների դասին բնորոշ առանձնահատկությունները, 2) ճիշտ է մեկնաբանում թաղանթաթևավորների կարգին բնորոշ առանձնահատկությունները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել միջատների դասին բնորոշ առանձնահատկությունները՝ տարանջատելով թաղանթաթևավորների կարգին բնորոշ առանձնահատկությունները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Մեթոդաբանական հիմնական զինանոցը պետք է հենված լինի տեսական պարապմունքների, թեմատիկ քննարկումների ու բանավեճերի, ուսումնամեթոդական գրականության կոնսպեկտավորման, տեսանյութերի վերլուծության վրա: Անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ տեսաֆիլմեր, ցուցապաստառներ, տարաբնույթ գծապատկերներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել մեղուների մարմնի կառուցվածքային (մորֆոլոգիական) առանձնահատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է սահմանազատում մեղուների մարմնի հիմնական կառուցվածքային (մորֆոլոգիական) մասերը, 2) ճիշտ է ներկայացնում մեղուների գլխի վրա տեղակայված տեսողության, հոտառության, շոշափելիքի և համի օրգանները՝ նկարագրելով մեղուների աչքերի, բեղիկների, բերանային ապարատի աշխատանքը, 3) ճիշտ է ներկայացնում մեղուների կրծքի կառուցվածքը և այդ հատվածում տեղակայված շարժողական օրգանները՝ նկարագրելով մեղուների վերջույթների և թևիկների աշխատանքը, 4) ճիշտ է ներկայացնում մեղուների որովայնի արտաքին և ներքին կառուցվածքը՝ նկարագրելով մեղուների շնչառական անցքերի, մոմագեղձերի ու խայթոցի աշխատանքը:

<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել մեղուների մարմնի հիմնական կառուցվածքային (մորֆոլոգիական) մասերը, գլխի վրա տեղակայված տեսողության, հոտառության, շոշափելիքի և համի օրգանները: Կառաջադրվի նաև ներկայացնել մեղուների կրծքի կառուցվածքը և շարժողական օրգանները՝ նկարագրելով մեղուների վերջույթների ու թևիկների աշխատանքը, մեղուների շնչառական անցքերի, մոմագեղծերի և խայթոցի աշխատանքը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները և ճիշտ է լրացնում թեստային առաջադրանքների 70%-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Մեթոդաբանական հիմնական զինանոցը պետք է հենված լինի տեսական պարապմունքների, թեմատիկ քննարկումների, բանավեճերի, տեսանյութերի վերլուծության վրա: Անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ տեսաֆիլմեր, ցուցապաստառներ, տարաբնույթ գծապատկերներ:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Բնութագրել մեղուների ֆիզիոլոգիան
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է նկարագրում մեղուների մարսողական համակարգը և դրա աշխատանքը, 2) ճիշտ է ներկայացնում մեղուների արյան (հեմոլիմֆայի) շրջանառությունը և նյութափոխանակությունը, 3) ճիշտ է ներկայացնում մեղուների սեռական օրգանների կառուցվածքը և զուգավորումը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել մեղուների մարսողական համակարգը և դրա աշխատանքը, արյան (հեմոլիմֆայի) շրջանառությունն ու նյութափոխանակությունը: Կառաջադրվի նաև ներկայացնել մեղուների սեռական օրգանների կառուցվածքը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային առաջադրանքների 2/3-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և թեստերի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, ուսումնամեթոդական և մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, մեթոդական մշակումներ,



	երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, սխեմատիկ գծապատկերներ, ցուցապաստառներ և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել մեղուների կենսաձևը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է նկարագրում մեղուների կյանքի հիմնական շրջափուլերը, 2) ճիշտ է բացատրում մեղուների կյանքի սեզոնային պարբերականությունը (ռիթմիկությունը), 3) ճիշտ է նկարագրում մեղուների կենսաապահովման բնակլիմայական պայմանները, 4) ճիշտ է սահմանում մեղուների բացառիկ դերը բույսերի կյանքում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել մեղուների կյանքի հիմնական շրջափուլերը, բացատրել մեղուների կյանքի սեզոնային պարբերականությունը (ռիթմիկությունը): Կառաջադրվի նաև նկարագրել մեղուների կենսաապահովման բնակլիմայական պայմանները, սահմանել դրանց նպաստավորության մակարդակը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները և ճիշտ է լրացնում թեստային առաջադրանքների 70%-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, ուսումնամեթոդական և մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, մեթոդական մշակումներ, տեղեկատվական գրականություն, սխեմատիկ գծապատկերներ, ցուցապաստառներ, տեսաֆիլմեր և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Գնահատել մեղրատու բույսերի (մեղրատուների) հանդակների լանդշաֆտային կարողությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է բնութագրում մեղրատուների հանդակների լանդշաֆտային (ֆիզիկաաշխարհագրական) պայմանները, 2) ճիշտ է բնութագրում մեղրատուների հանդակների առկա վիճակը,

	<p>3) ճիշտ է մեկնաբանում մեղրատուների հանդակների էկոլոգիական հավասարակշռությանը սպառնացող բնական և մարդածին վտանգները,</p> <p>4) ճիշտ է բացատրում մեղուների տեղը սննդային տարբեր շղթաների կազմում,</p> <p>5) ճիշտ է հաշվարկում մեղրատուների հանդակների շահագործման թույլատրելի սահմանային արժեքները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի բնութագրել մեղրատուների հանդակների լանդշաֆտային (ֆիզիկաաշխարհագրական) պայմանները և դրանց առկա վիճակը: Կառաջադրվի նաև բացատրել մեղուների տեղը սննդային տարբեր շղթաների կազմում, հաշվարկել ու գնահատել մեղրատուների հանդակների շահագործման թույլատրելի սահմանային արժեքները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային հանձնարարությունների 70 %-ից ավելին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և թեստային առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, մասնագիտական գործունեությանն առնչվող մշակումներ, սխեմատիկ գծապատկերներ, տեսաֆիլմեր և այլն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	<p>Ներկայացնել մեղուների կենսական տարածքների աղտոտման պատճառները, դրսևորումները և դրանց դեմ պայքարի հիմնական միջոցառումները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է բնութագրում մեղուների կենսատարածքների ֆիզիկական աղտոտման պատճառները, աղտոտվածության դրսևորումները և դրանց դեմ ուղղված պայքարի հիմնական միջոցառումները,</p> <p>2) ճիշտ է բնութագրում մեղուների կենսատարածքների քիմիական աղտոտման պատճառները, աղտոտվածության դրսևորումները և դրանց դեմ ուղղված պայքարի հիմնական միջոցառումները,</p> <p>3) ճիշտ է բնութագրում մեղուների կենսատարածքների կենսաբանական աղտոտման պատճառները, աղտոտվածության դրսևորումները և դրանց դեմ ուղղված պայքարի հիմնական միջոցառումները:</p>

<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի բնութագրել մեղուների կենսատարածքների ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտման պատճառները, աղտոտվածության դրսևորումները և դրանց դեմ ուղղված պայքարի հիմնական միջոցառումները՝ սահմանելով վերջիններիս արդյունավետության եզրերը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային առաջադրանքների 2/3-ից ավելի:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և թեստային առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և տեղեկատվական գրականություն, ուսումնամեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, սխեմատիկ գծապատկերներ, ցուցապաստառներ, տեսաֆիլմեր և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՂՎԱԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԿԱԶՄԸ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԵՂ - 5 - 13 - 003
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է՝ ուսանողի մեջ ձևավորել նախնական գիտելիքներ մեղվաընտանիքի կազմի և կյանքի պայմանների մասին: Ուսանողը ձեռք կբերի մասնագիտական կարողություններ՝ մեղվաընտանիքի առանձնյակները միմյանցից տարբերելու և դրանց գործառույթները տարբերակելու վերաբերյալ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ տեսական ուսուցում՝ 34 ժամ գործնական պարապմունք՝ 20 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՄԵՂ - 5 - 13 - 002 «Մեղուների կենսաբանությունը և կենսատարածքի էկոլոգիան» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի մեղվաընտանիքի առանձնյակները և նրանց հիմնական գործառույթները, 2. բնութագրի մեղվաընտանիքի կյանքի պայմանները,

	<p>3. ներկայացնի մեղվաընտանիքի կեցությունը բնական միջավայրում և ընտանեցման պայմաններում,</p> <p>4. մեկնաբանի մեղվաընտանիքների խնամքի տնտեսական հիմքերը:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել մեղվաընտանիքի առանձնյակները և նրանց հիմնական գործառույթները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է բնութագրում մեղվաընտանիքը՝ որպես կազմակերպված կենսաբանական ամբողջություն,</p> <p>2) ճիշտ է բացատրում մայր մեղվի արտաքին հատկանիշները, գործառույթները և նշանակությունը,</p> <p>3) ճիշտ է բացատրում աշխատավոր մեղուների արտաքին հատկանիշները, գործառույթները և նշանակությունը,</p> <p>4) ճիշտ է բացատրում բոռերի արտաքին հատկանիշները, գործառույթները և նշանակությունը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի բնութագրել մեղվաընտանիքը՝ որպես կենսաբանական ամբողջություն, ինչպես նաև կառաջադրվի բացատրել մայր մեղվի, աշխատավոր մեղուների և բոռերի արտաքին հատկանիշներն ու նրանց գործառույթները և նշանակությունը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները և ճիշտ է լրացնում թեստային առաջադրանքների 60 %-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, մասնագիտական գրականության մշակումներ, տեսաֆիլմեր և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Բնութագրել մեղվաընտանիքի կյանքի պայմանները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է մեկնաբանում մեղվաընտանիքի կյանքի շրջափուլերը,</p> <p>2) ճիշտ է մեկնաբանում մեղվաընտանիքի ուժը և վերջինիս կախվածությունը մայր մեղվի որակից,</p>

	<p>3) ճիշտ է բացատրում մեղուների հասունացման, բեղմնավորման և ձագատվության (պարսատվության) կենսաբանական հիմունքները,</p> <p>4) ճիշտ է նկարագրում մեղվաընտանիքի կենսագործունեության առանձնահատկություններն՝ ըստ տարվա եղանակների (կամ մեղվաբուծական սեզոնների),</p> <p>5) ճիշտ է բնութագրում մեղվաընտանիքի ձմեռման առավել նպաստավոր և արդյունավետ պայմանները,</p> <p>6) ճիշտ է մեկնաբանում «մեղուների լեզվի» առանձնահատկությունները և դրանց էթոլոգիական ժամանակակից ուսումնասիրությունների արդյունքները,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում մեղուների կողմից կատարվող աշխատանքները,</p> <p>8) ճիշտ է ներկայացնում մեղուների տարիքի հետ կապված գեղձերի ֆունկցիոնալ փոփոխությունները,</p> <p>9) ճիշտ է նկարագրում մեղուների թռիչքային ակտիվությանը նպաստող գործոնները,</p> <p>10) ճիշտ է ներկայացնում ջրի դերը մեղուների կյանքում:</p>
<p><b>Գնահատման միջոցը</b></p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի մեկնաբանել մեղվաընտանիքի կյանքի շրջափուլերը, մեղվաընտանիքի ուժը և վերջինիս կախվածությունը մայր մեղվի որակից: Կառաջադրվի բացատրել մեղուների հասունացման, բեղմնավորման և ձագատվության (պարսատվության) կենսաբանական հիմունքներն ու բնութագրել մեղվաընտանիքի ձմեռման առավել նպաստավոր և արդյունավետ պայմանները: Կհանձնարարվի նաև նկարագրել մեղուների թռիչքային ակտիվությանը նպաստող գործոնները, ներկայացնել մեղուների կողմից կատարվող աշխատանքները, մեղուների տարիքի հետ կապված գեղձերի ֆունկցիոնալ փոփոխությունները և ջրի դերը մեղուների կյանքում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, տեղեկատվական ուղեցույցներ, սխեմատիկ գծապատկերներ, տեսաֆիլմեր և այլն:</p>

<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել մեղվաընտանիքի կեցությունը բնական միջավայրում և ընտանեցման պայմաններում
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է նկարագրում մեղվաբնի կառուցվածքը բնական պայմաններում,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում մասնավոր մեղվանոցներում և տոհմային մեղվաբուծական տնտեսություններում (ֆերմաներում) օգտագործվող ձմեռանոցները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում մասնավոր մեղվանոցներում և տոհմային մեղվաբուծական տնտեսություններում (ֆերմաներում) օգտագործվող ամառանոցները,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում մեղվաընտանիքների կյանքի պայմանների առանձնահատկությունները և դրանց սկզբունքային տարբերությունները մասնավոր մեղվանոցներում ու տոհմային մեղվաբուծական տնտեսություններում (ֆերմաներում),</li> <li>5) ճիշտ է ներկայացնում մեղվաընտանիքների կյանքի պայմանների առանձնահատկությունները տարբեր բնակլիմայական պայմաններում (բնական զոնաներում և վերընթաց լանդշաֆտային գոտիներում):</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել մեղվաբնի կառուցվածքը բնական պայմաններում, ներկայացնել մասնավոր մեղվանոցներում և տոհմային մեղվաբուծական տնտեսություններում (ֆերմաներում) օգտագործվող ձմեռանոցներն ու ամառանոցները: Կառաջադրվի տարբերակել մեղվաընտանիքների կյանքի պայմանների սկզբունքային տարբերությունները մասնավոր մեղվանոցներում ու տոհմային մեղվաբուծական տնտեսություններում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները և ճիշտ է լրացնում թեստային առաջադրանքների 60%-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, մասնագիտական գործունեությանն առնչվող մշակումներ, տեսաֆիլմեր և այլն:

<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Մեկնաբանել մեղվաընտանիքների խնամքի տնտեսական հիմքերը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է սահմանում մասնավոր մեղվանոցներում և տոհմային մեղվաբուծական տնտեսություններում (ֆերմաներում) տարվող աշխատանքների տնտեսագիտական հիմքերն ու դրանց համապատասխան փաստաթղթաշրջանառության վարման կարգերը, 2) ճիշտ է սահմանում մասնավոր մեղվանոցներում և տոհմային մեղվաբուծական տնտեսություններում (ֆերմաներում) տարվող աշխատանքների հսկման ու գնահատման գործառույթները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի սահմանել մասնավոր մեղվանոցներում և տոհմային մեղվաբուծական տնտեսություններում (ֆերմաներում) տարվող աշխատանքների տնտեսագիտական հիմքերն ու դրանց համապատասխան փաստաթղթաշրջանառության վարման կարգերը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային առաջադրանքների 70 %-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և թեստային առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, ուսումնամեթոդական և մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, մեթոդական մշակումներ, տեղեկատվական գրականություն, սխեմատիկ գծապատկերներ, ցուցապաստառներ, տեսաֆիլմեր և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԵՐԱՅԻՆ ԲԱԶԱՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԵՂ – 5 – 13 – 004
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է՝ ուսանողի մեջ ձևավորել մեղրատու մշակաբույսերի մշակման տեխնոլոգիայի վերաբերյալ գիտելիքներ և մեղվաբուծության համար կարևոր գործոն հանդիսացող կերային բազայի հիմնական

	առանձնահատկություններն օգտագործելու մասնագիտական կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	42 ժամ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական պարապմունք՝ 18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու և յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի մեղրատու բույսերի տեսակային կազմի դասակարգումը և բույսերի ծաղկման ֆենոլոգիան, ժամկետներն ու տևողությունը, 2. ներկայացնի բնական արոտներում և խոտհարքներում աճող մեղրատու բույսերը և դրանց նեկտարազատման ժամկետները, 3. բնութագրի նեկտարատու անտառային և պտղատու ծառատեսակները, թփերը, բանջարաբոստանային ու դաշտային մշակաբույսերը և գնահատի դրանցից ակնկալվող հնարավոր բերքի քանակը, 4. ներկայացնի մեղուների դերը և նշանակությունը մեղրատու մշակաբույսերի խաչաձև փոշոտման գործընթացում:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել մեղրատու բույսերի տեսակային կազմի դասակարգումը և բույսերի ծաղկման ֆենոլոգիան, ժամկետներն ու տևողությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում հիմնական մեղրատու բույսերը և դրանց կառուցվածքային բաղադրիչները, 2) ճիշտ է կազմում հիմնական մեղրատու բույսերի ծաղկման օրացույցը, 3) ճիշտ է բացահայտում անմեղրաբեր ժամանակաշրջանը՝ հաշվարկելով դրա տևողությունը, 4) ճիշտ է ներկայացնում անմեղրաբեր ժամանակաշրջանն առավելագույնս կրճատելուն միտված հիմնական միջոցառումները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի



	<p>ներկայացնել հիմնական մեղրատու բույսերը և դրանց կառուցվածքային բաղադրիչները ու անմեղրաբեր ժամանակաշրջանն առավելագույնս կրճատելուն միտված հիմնական միջոցառումները, ինչպես նաև կազմել հիմնական մեղրատու բույսերի ծաղկման օրացույցը: Կհանձնարարվի նաև բացահայտել անմեղրաբեր ժամանակաշրջանը՝ հաշվարկելով դրա տևողությունը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային առաջադրանքների 70 %-ից ավելին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և թեստերի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնամեթոդական գրականություն, ձեռնարկներ, ուղեցույցներ, գծապատկերներ, ցուցապաստառներ, տեսաֆիլմեր, բնության օրացույցի նմուշներ, մեղրատու բույսերի հերբարիում, էլեկտրոնային կամ սովորական գրատախտակ և այլն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Ներկայացնել բնական արոտներում և խոտհարքներում աճող մեղրատու բույսերը և դրանց նեկտարազատման ժամկետները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում բնական արոտների և խոտհարքների մեղրատու բույսերի տեսակները,</li> <li>2) ճիշտ է նկարագրում բույսերի կողմից նեկտարի արտադրման բնական ընթացքը,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում բնական արոտների և խոտհարքների մեղրատու բույսերի նեկտարազատման ժամկետները,</li> <li>4) ճիշտ է նկարագրում բույսերի կողմից ծաղկափոշու արտադրման բնական ընթացքը,</li> <li>5) ճիշտ է սահմանում «մեղվաբերքի ժամանակ» հասկացությունը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել բնական արոտների և խոտհարքների մեղրատու բույսերի տեսակները, բնական արոտների և խոտհարքների մեղրատու բույսերի նեկտարազատման ժամկետները, ինչպես նաև նկարագրել բույսերի կողմից նեկտարի և ծաղկափոշու արտադրման բնական ընթացքը: Կհանձնարարվի կազմել մեղրատուների հերբարիումներ, պատկերազարդ ալբոմներ, ինչպես նաև սահմանել «մեղվաբերքի ժամանակ» հասկացությունը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային</p>

	առաջադրանքների 70 %-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և թեստերի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնամեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, տեղեկատվական գրականություն, սխեմատիկ գծապատկերներ, ցուցապաստառներ, տեսաֆիլմեր, բնության օրացույցի նմուշներ և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Բնութագրել նեկտարատու անտառային և պտղատու ծառատեսակները, թփերը, բանջարաբուստանային ու դաշտային մշակաբույսերը և գնահատել դրանցից ակնկալվող հնարավոր բերքի քանակը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում անտառային և պտղատու նեկտարատու ծառատեսակները, 2) ճիշտ է թվարկում նեկտարատու թփերը, 3) ճիշտ է թվարկում նեկտարատու բանջարաբուստանային և դաշտային մշակաբույսերը, 4) ճիշտ է որոշում նեկտարատու մշակաբույսերից ակնկալվող հնարավոր բերքի քանակը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել անտառային և պտղատու նեկտարատու ծառատեսակները, թվարկել նեկտարատու թփերն ու նեկտարատու բանջարաբուստանային և դաշտային մշակաբույսերը: Կհանձնարարվի նաև որոշել նեկտարատու մշակաբույսերից ակնկալվող հնարավոր բերքի մոտավոր քանակը, ներկայացնել դրա հաշվարկման հիմնական գործիքները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարություններն ու հաշվարկային խնդիրները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնամեթոդական գրականություն, ձեռնարկներ, ուղեցույցներ, տեղեկագրքեր, սխեմատիկ գծապատկերներ, տեսաֆիլմեր և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ

<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել մեղուների դերը և նշանակությունը մեղրատու մշակաբույսերի խաչաձև փոշոտման գործընթացում
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է հիմնավորում մեղրատու մշակաբույսերի աճի և զարգացման գործընթացում մեղուների կողմից իրականացվող խաչաձև փոշոտման կարևորությունը, 2) ճիշտ է հիմնավորում մեղրատու բույսի խաչաձև փոշոտման և բերքատվության կապը, 3) ճիշտ է թվարկում խաչաձև փոշոտման վրա բացասաբար ազդող բնակլիմայական պայմանները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի հիմնավորել մեղրատու մշակաբույսերի աճի և զարգացման գործընթացում մեղուների կողմից իրականացվող խաչաձև փոշոտման կարևորությունը, մեղրատու բույսի խաչաձև փոշոտման և բերքատվության կապը, ինչպես նաև թվարկել խաչաձև փոշոտման վրա բացասաբար ազդող բնակլիմայական պայմանները: Կառաջադրվեն տարբեր բնակլիմայական իրավիճակներում բերքատվության կանխատեսման խնդիր-առաջադրանքներ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային առաջադրանքների 70 %-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և թեստերի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, տեղեկատվական գրականություն և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԵՐԸ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԵՂ - 5- 13 - 005
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է՝ ուսանողի մեջ ձևավորել գիտելիքներ մասնավոր մեղվանոցներում և տոհմային մեղվաբուծական տնտեսություններում սանիտարական ու հիգիենիկ նորմերի պահպանման մասին: Ուսանողը պետք է կարողանա դրսևորել մասնագիտական սանիտարիայի և հիգիենայի համալիր կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ տեսական ուսուցում՝ 16 ժամ

	գործնական պարապմունք՝ 20 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀ - ԱԱՕ - 5 - 13- 001 «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնի մասնավոր մեղվանոցներում ու տոհմային մեղվաբուծական ֆերմաներում սանիտարիայի և հիգիենայի պահանջները,</li> <li>2. ներկայացնի մեղվաբուծական մթերքների և կիսամթերքների նախնական վերամշակման, տեղափոխման ու պահպանման սանիտարական նորմերը և պայմանները,</li> <li>3. բնութագրի սննդային ինֆեկցիաների, վարակների և թունավորումների կանխարգելման միջոցառումները,</li> <li>4. ներկայացնի մասնավոր մեղվանոցներում և տոհմային մեղվաբուծական ֆերմաներում սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղի ու աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները:</li> </ol>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել մասնավոր մեղվանոցներում ու տոհմային մեղվաբուծական ֆերմաներում սանիտարիայի և հիգիենայի պահանջները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում «արտադրական սանիտարիա» և «արտադրական հիգիենա» հասկացությունները,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում միկրոկլիմայի նկատմամբ մասնավոր մեղվանոցների նորմատիվային պահանջները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում միկրոկլիմայի նկատմամբ տոհմային մեղվաբուծական ֆերմաների նորմատիվային պահանջները,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում մասնավոր մեղվանոցներում ու տոհմային մեղվաբուծական ֆերմաներում անբարենպաստ պայմաններից պաշտպանվելու միջոցները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, խմբային աշխատանքների, անհատական նախագծերի կազմման և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել «արտադրական

	սանիտարիա» և «արտադրական հիգիենա» հասկացությունները, միկրոկլիմայի նկատմամբ մասնավոր մեղվանոցների ու տոհմային մեղվաբուծական ֆերմաների նորմատիվային պահանջները, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրում անբարենպաստ պայմաններից պաշտպանվելու միջոցները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնամեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, մասնագիտական տեղեկագրքեր, սխեմատիկ գծապատկերներ, տեսաֆիլմեր և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել մեղվաբուծական մթերքների և կիսամթերքների նախնական վերամշակման, տեղափոխման ու պահպանման սանիտարական նորմերը և պայմանները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում մեղվաբուծական մթերքների և կիսամթերքների նախնական վերամշակման սանիտարական նորմերն ու պահանջները՝ համաձայն ընդունված չափանիշների, 2) ճիշտ է ներկայացնում մեղվաբուծական մթերքների և կիսամթերքների տեղափոխման սանիտարական նորմերն ու պահանջները՝ համաձայն ընդունված չափանիշների, 3) ճիշտ է ներկայացնում մեղվաբուծական մթերքների և կիսամթերքների պահպանման սանիտարական նորմերն ու պահանջները՝ համաձայն ընդունված չափանիշների, 4) ճիշտ է սահմանում մեղվաբուծական մթերքների և կիսամթերքների նախնական վերամշակման, տեղափոխման ու պահպանման համար նախատեսված ջերմաստիճանային պայմանները, հարաբերական խոնավության թույլատրելի միջակայքերը և ժամանակային առավելագույն ու նվազագույն տևողությունները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի՝ համաձայն ընդունված չափանիշների, ներկայացնել մեղվաբուծական մթերքների և կիսամթերքների

	<p>նախնական վերամշակման, տեղափոխման ու պահպանման սանիտարական նորմերը և պահանջները: Կհանձնարարվի նաև սահմանել մեղվաբուծական մթերքների և կիսամթերքների նախնական վերամշակման, տեղափոխման ու պահպանման համար նախատեսված ջերմաստիճանային պայմանները, հարաբերական խոնավության թույլատրելի միջակայքերը և ժամանակային առավելագույն ու նվազագույն տևողությունները, թվարկված պահանջների անհամապատասխանությունից բխող հետևանքները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային հանձնարարությունների 2/3-ից ավելին:</p>
<p><b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b></p>	<p>Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և թեստային առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնամեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, տեղեկագրքեր, նորմատիվային փաստաթղթեր և այլն:</p>
<p><b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b></p>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p><b>Ուսումնառության արդյունք 3</b></p>	<p>Բնութագրել սննդային ինֆեկցիաների, վարակների և թունավորումների կանխարգելման միջոցառումները</p>
<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է պահպանում սննդային ներկերի օգտագործման սանիտարական անվտանգության կանոնները և նորմերը,</li> <li>2) ճիշտ է պահպանում քիմիական սննդային նյութերի օգտագործման սանիտարական անվտանգության կանոնները և նորմերը,</li> <li>3) ճիշտ է շահագործում տեխնոլոգիական սարքավորումներն ու աշխատանքային գործիքները՝ պահպանելով դրանց սանիտարական անվտանգության նորմերը,</li> <li>4) ճիշտ է կազմակերպում աշխատատեղի, սարքավորումների, գործիքների և աշխատանքային պարագաների ախտահանման գործընթացը,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում մեղվաբուծական մթերքների օգտագործումից հնարավոր ինֆեկցիաների և վարակների առաջացման պատճառները,</li> <li>6) ճիշտ է ներկայացնում մեղվաբուծական մթերքների օգտագործումից հնարավոր թունավորումների առաջացման պատճառները:</li> </ol>

<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի պահպանել սննդային ներկերի և քիմիական սննդային նյութերի օգտագործման սանիտարական անվտանգության կանոններն ու նորմերը, ինչպես նաև շահագործել տեխնոլոգիական սարքավորումները և աշխատանքային գործիքները՝ պահպանելով դրանց սանիտարական անվտանգության նորմերը: Կհանձնարարվի նաև ներկայացնել մեղվաբուծական մթերքների օգտագործումից հնարավոր ինֆեկցիաների, վարակների և թունավորումների առաջացման պատճառներն ու դրանց դեմ պայքարելու միջոցառումները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները և ճիշտ է լրացնում թեստերի 60 %-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական գրականություն և ձեռնարկներ, ուղեցույցներ, տեղեկագրքեր, նորմատիվային փաստաթղթերի ժողովածուներ և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել մասնավոր մեղվանոցներում և տոհմային մեղվաբուծական ֆերմաներում սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղի ու աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում մարդու առողջության և աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական, հոգեբանական),</li> <li>2) ճիշտ է ներկայացնում աշխատավայրի (աշխատատեղի) սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն),</li> <li>3) ճիշտ է ներկայացնում մասնագիտական աշխատանքի համար անհրաժեշտ նյութերի և պարագաների անվնաս օգտագործումը,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ հիմնական միջոցառումները:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի

	ներկայացնել մարդու առողջության և աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական, հոգեբանական), աշխատավայրի (աշխատատեղի) սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն), մասնագիտական աշխատանքի համար անհրաժեշտ նյութերի ու պարագաների անվնաս օգտագործման սկզբունքները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է լրացնում թեստերի 60 %-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, մասնագիտական գրականություն և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՂՎԱԲՈՒԾԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ, ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԵՂ - 5 - 13 – 006
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է՝ ուսանողի մեջ ձևավորել գիտելիքներ մասնավոր մեղվանոցներում և տոհմային մեղվաբուծական տնտեսություններում օգտագործվող գործիքների ու սարքավորումների մասին: Ուսանողը պետք է դրսևորի մեղվաբուծական աշխատանքային գործիքները և սարքավորումները ճիշտ ու տեխնիկական անվտանգության կանոններին և նորմերին համապատասխան կիրառելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ տեսական ուսուցում՝ 12 ժամ գործնական պարապմունք՝ 24 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու և յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ցուցադրի մեղրաքամի կառուցվածքը և աշխատանքային սկզբունքները, 2. նախապատրաստի մեղրահացերի սերեկն առանձնացնելու համար նախատեսված սեղանը և դանակները,



	<p>3. բնութագրի մեղվափեթակների կառուցվածքային առանձնահատկությունները և հիմնական տեսակները,</p> <p>4. բնութագրի և ցուցադրի մեղվաբուծական գույքի հիմնական բաղադրիչները:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարման կարգակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ցուցադրել մեղրաքամի կառուցվածքը և աշխատանքային սկզբունքները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում մեղրաքամի հիմնական աշխատանքային մասերը (ագրեգատները),</p> <p>2) ճիշտ է ներկայացնում մեղրաքամի աշխատանքային մասերի նշանակությունը և դերակատարումը,</p> <p>3) ճիշտ է կատարում մեղրաքամի գործարկման նախապատրաստական աշխատանքները,</p> <p>4) ճիշտ է տեղակայում և շահագործում մեղրաքամը՝ պահպանելով տեխնիկական անվտանգության կանոնները,</p> <p>5) ճիշտ է կատարում մեղրաքամի լվացումը, չորացումը և ախտահանումը,</p> <p>6) ճիշտ է կատարում մեղրաքամի պարզագույն անսարքությունների վերացման աշխատանքները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել մեղրաքամի հիմնական աշխատանքային մասերը (ագրեգատները), դրանց նշանակությունը և դերակատարումը, ինչպես նաև կատարել մեղրաքամի գործարկման նախապատրաստական աշխատանքներ, մեղրաքամի լվացում, չորացում, ախտահանում: Կառաջադրվի նաև կատարել մեղրաքամի պարզագույն անսարքությունների վերացման աշխատանքներ, տեղակայել և շահագործել մեղրաքամը՝ պահպանելով տեխնիկական անվտանգության կանոնները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները, վերացնում է մեղրաքամի անսարքությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, սխեմատիկ գծապատկերներ, մեղրաքամ գործիք, վերջինիս աշխատանքային մասերի (ագրեգատների) ցուցանմուշներ և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ

<b>Ժամաքանակը</b>	գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Նախապատրաստել մեղրահացերի սերեկն առանձնացնելու համար նախատեսված սեղանը և դանակները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ընտրում մեղրահացի սերեկի առանձնացման համար նախատեսված սեղանի տեսակը և վերջինիս տեղադիրքը,</li> <li>2) ճիշտ է ընտրում մեղրահացի սերեկի առանձնացման համար նախատեսված դանակները, դրանք սրում է, լվանում՝ ենթարկելով ջերմային մշակման,</li> <li>3) ճիշտ է օգտագործում մեղրահացի սերեկի առանձնացման համար նախատեսված դանակները,</li> <li>4) ճիշտ է կատարում մեղրահացի սերեկի առանձնացման համար նախատեսված դանակները ախտահանումը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ընտրել մեղրահացի սերեկի առանձնացման համար նախատեսված սեղանի տեսակը և կատարել վերջինիս տեղադրում: Կառաջադրվի ընտրել մեղրահացի սերեկի առանձնացման համար նախատեսված դանակներ, սրել դրանք և լվանալ՝ ենթարկելով ջերմային մշակման: Կհանձնարարվի նաև կատարել մեղրահացի սերեկի առանձնացման համար նախատեսված դանակների ախտահանում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, մեղրահացի սերեկի առանձնացման համար նախատեսված սեղան ու դանակներ, սխեմատիկ գծապատկերներ և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Բնութագրել մեղվափեթակների կառուցվածքային առանձնահատկությունները և հիմնական տեսակները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում մեղվափեթակի կառուցվածքը և դրա առավել արդյունավետ չափերը,</li> <li>2) ճիշտ է ներկայացնում մեղվափեթակի լայն կիրառություն ունեցող տարատեսակները, դրանցից յուրաքանչյուրի հիմնական ռավելությունները,</li> <li>3) ճիշտ է մեկնաբանում փայտե և փրփրապլաստե մեղվափեթակների տարբերությունները՝ առավելություններն ու</li> </ol>

	<p>թերությունները,</p> <p>4) ճիշտ է կատարում մեղվափեթակի վնասվածքների բացահայտումը և դրանց վերացման պարզագույն ատաղձագործական աշխատանքները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել մեղվափեթակի կառուցվածքը և դրա առավել արդյունավետ չափերը, մեղվափեթակի լայն կիրառություն ունեցող տարատեսակները, դրանցից յուրաքանչյուրի հիմնական առավելությունները, ինչպես նաև մեկնաբանել փայտե ու փրփրապլաստե մեղվափեթակների տարբերությունները՝ առավելությունները և թերությունները: Կհանձնարարվի կատարել մեղվափեթակի վնասվածքների բացահայտում և դրանց վերացման պարզագույն ատաղձագործական աշխատանքներ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, տեսաֆիլմեր, մեղվափեթակի նմուշներ և այլն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Բնութագրել և ցուցադրել մեղվաբուծական գույքի հիմնական բաղադրիչները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում մեղվաբուծի արտահագուստի նկատմամբ ներկայացվող պահանջները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում մեղվաբուծի քողի և գլխարկի աշխատանքային նշանակությունը,</p> <p>3) ճիշտ է մեկնաբանում մեղվաբուծի ձեռնոցների նկատմամբ ներկայացվող պահանջները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում ծխարարից արձակվող ծխի դերը,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում ծխարարի կառուցվածքը և նշանակությունը,</p> <p>6) ճիշտ է գործարկում ծխարարը՝ պահպանելով տեխնիկական անվտանգության կանոնները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:</p>

	<p>Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել մեղվաբույծի արտահագուստի նկատմամբ ներկայացվող պահանջները, մասնավորապես, մեղվաբույծի քողի և գլխարկի աշխատանքային նշանակությունը, ծխարարից արձակվող ծխի դերը, ծխարարի կառուցվածքը, ինչպես նաև մեկնաբանել մեղվաբույծի ձեռնոցների նկատմամբ ներկայացվող պահանջները: Կհանձնարարվի գործարկել ծխարարը՝ հետևելով տեխնիկական անվտանգության կանոնների պահպանմանը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, սխեմատիկ գծապատկերներ, տեսաֆիլմեր, մեղվաբույծի արտահագուստ, քող, գլխարկ, ձեռնոցներ, ծխարար և այլն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՂՎԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՊՐԱՆՔԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԵՂ – 5 – 13 – 007
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Այս մոդուլի նպատակն է՝ ուսանողի մեջ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ապրանքագիտության ուսումնասիրության առարկայի, պարենային ապրանքներին, մասնավորապես, մեղվամթերքներին վերաբերող տեսական հարցերի շրջանակի մասին, ինչպես նաև զարգացնել մասնագիտական կարողություններ վերջիններիս դասակարգմանը, կողավորմանն ու որակին ներկայացվող սկզբունքների և պահանջների վերաբերյալ:</p>
<b>Մոդուլի տևողությունը</b>	<p>54 ժամ տեսական ուսուցում՝ 34 ժամ գործնական պարապմունք՝ 20 ժամ</p>
<b>Մուտքային պահանջները</b>	<p>Այս մոդուլն ուսումնասիրելու և յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:</p>
<b>Ուսումնառության արդյունքները</b>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ներկայացնի ապրանքագիտության ուսումնասիրության առարկան և հիմնական խնդիրները,</li> </ol>

	<p>2. մեկնաբանի ապրանքների դասակարգման և կողավորման սկզբունքները,</p> <p>3. մեկնաբանի ապրանքների, մասնավորապես, մեղվամթերքների որակին ներկայացվող պահանջները,</p> <p>4. գնահատի ապրանքների, մասնավորապես, մեղվամթերքների մրցունակությունը:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել ապրանքագիտության ուսումնասիրության առարկան և հիմնական խնդիրները
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում ապրանքագիտության տեղը տնտեսագիտության ժամանակակից կառուցվածքում,</p> <p>2) ճիշտ է սահմանում ապրանքագիտության ուսումնասիրության առարկան,</p> <p>3) ճիշտ է բացատրում ապրանքագիտության հիմնական խնդիրները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում ապրանքագիտական ուսումնասիրությունների ժամանակակից մեթոդները,</p> <p>5) ճիշտ է մեկնաբանում ապրանքագիտության կապն այլ գիտությունների հետ:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել ապրանքագիտության տեղը տնտեսագիտության ժամանակակից կառուցվածքում, ապրանքագիտական ուսումնասիրությունների ժամանակակից մեթոդները և սահմանել ապրանքագիտության ուսումնասիրության առարկան: Կհանձնարարվի նաև բացատրել ապրանքագիտության հիմնական խնդիրները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները և ճիշտ է լրացնում թեստային առաջադրանքների 70 %-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, ապրանքների հավաստագրման փաստաթղթային ձևանմուշներ և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 14 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ

<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Մեկնաբանել ապրանքների դասակարգման և կողավորման սկզբունքները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում ապրանքների դասակարգման նշանակությունը և սկզբունքները,</li> <li>2) ճիշտ է մեկնաբանում ապրանքների դասակարգման հատկանիշները,</li> <li>3) ճիշտ է բացատրում ապրանքների դասակարգման եղանակները,</li> <li>4) ճիշտ է կատարում մեղվաբուծական ապրանքների (մեղվամթերքների) դասակարգումը,</li> <li>5) ճիշտ է ներկայացնում ապրանքների կողավորման ընդհանուր մոտեցումները և սկզբունքները,</li> <li>6) ճիշտ է վերծանում ապրանքների կողերը, որպես յուրատեսակ ծածկադասիչներ:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել ապրանքների դասակարգման նշանակությունը և սկզբունքները, մեկնաբանել ապրանքների դասակարգման հատկանիշներն ու եղանակները, կատարել մեղվաբուծական ապրանքների (մեղվամթերքների) դասակարգում, ներկայացնել ապրանքների կողավորման ընդհանուր մոտեցումները և սկզբունքները: Կհանձնարարվի նաև վերծանել ապրանքների կողերը, որպես յուրատեսակ ծածկադասիչներ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները և ճիշտ է լրացնում թեստային առաջադրանքների 2/3-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնամեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, ապրանքների կողերի աղյուսակներ, պետական չափանիշների (ստանդարտների) ժողովածուներ և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Մեկնաբանել ապրանքների, մասնավորապես, մեղվամթերքների որակին ներկայացվող պահանջները
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է ներկայացնում ապրանքի, մասնավորապես, մեղվամթերքների որակը ձևավորող գործոնները,</li> <li>2) ճիշտ է թվարկում և բացատրում մեղվամթերքների ֆիզիկական հատկությունները,</li> <li>3) ճիշտ է թվարկում և բացատրում մեղվամթերքների քիմիական հատկությունները,</li> </ol>

	<p>4) ճիշտ է թվարկում և բացատրում մեղվամթերքների կենսաբանական հատկությունները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում մեղվամթերքների որակի վրա բացասաբար անդրադարձող գործոնները,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում մեղվամթերքների որակի ապահովմանն ու բարելավմանը նպաստող գործոնները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել ապրանքի, մասնավորապես, մեղվամթերքների որակը ձևավորող գործոնները, թվարկել և բացատրել մեղվամթերքների ֆիզիկական, քիմիական, կենսաբանական հատկությունները, ինչպես նաև ներկայացնել մեղվամթերքների որակի վրա բացասաբար անդրադարձող գործոնները: Կառաջադրվի ներկայացնել մեղվամթերքների որակի ապահովմանն ու բարելավմանը նպաստող գործոնները և դրանց ապահովմանը միտված հիմնական գործընթացները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ա ճիշտ է կատարում թեստային հանձնարարությունների 70 %-ից ավելին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և թեստերի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, ապրանքների կողերի աղյուսակներ, պետական չափանիշների (ստանդարտների) ժողովածուներ և այլն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Գնահատել ապրանքների, մասնավորապես, մեղրամթերքների մրցունակությունը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է բացատրում ապրանքի մրցունակության էությունը, բովանդակությունը և այն ձևավորող գործոնները,</p> <p>2) ճիշտ է բացատրում ապրանքների մրցունակության գնահատման ընդհանրական սկզբունքները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում ապրանքների, մասնավորապես, մեղվամթերքների մրցունակության հիմնական խմբերն ու դրանց առանձնացման սկզբունքները,</p> <p>4) ճիշտ է կատարում նախապես տրված մեղվամթերքի մրցունակության ընդհանրական գնահատումը,</p> <p>5) ճիշտ է որոշում նախապես տրված մեղվամթերքի պատկանելիությունը մրցունակության այս կամ այն խմբին:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի</p>

	բացատրել ապրանքի մրցունակության էությունը, բովանդակությունը և այն ձևավորող գործոններն ու ապրանքների մրցունակության գնահատման ընդհանրական սկզբունքները: Կառաջադրվի ներկայացնել ապրանքների, մասնավորապես, մեղվամթերքների մրցունակության հիմնական խմբերն ու դրանց առանձնացման սկզբունքները, կատարել նախապես տրված մեղվամթերքի մրցունակության ընդհանրական գնահատում: Կհանձնարարվի որոշել նախապես տրված մեղվամթերքի պատկանելիությունը մրցունակության այս կամ այն խմբին: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային առաջադրանքների 70 %-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և թեստերի միջոցով: Անհրաժեշտ է ունենալ տնտեսագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
<b>Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը «Մ Ե Ղ Վ Ա Բ Ո Ւ Ծ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ն Ե Ր Ի Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Մ Ը»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԵՂ - 5 - 13 - 008
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է՝ ուսանողի մեջ ձևավորել գիտելիքներ աշխատաշուկայի, մասնավոր և պետական տնտեսությունների (կազմակերպությունների) ու դրանց առանձին ստորաբաժանումների աշխատանքի կազմակերպման, վարձատրության համակարգի, փաստաթղթավարության և այլ տարրերի մասին:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ տեսական ուսուցում՝ 26 ժամ գործնական պարապմունք՝ 28 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՄԵՂ - 5 - 13 - 003 «Մեղվաընտանիքների կազմը» և ՄԵՂ - 5 - 13 - 006 «Մեղվաբուժական գույքը, գործիքները և սարքավորումները» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի տնտեսության (կազմակերպության) բնութագրի, տիպերի, ստեղծման և գրանցման կարգը,



	<p>2. ներկայացնի աշխատանքի և աշխատավարձի կազմակերպման հիմունքները և աշխատավարձի նորմերի հաշվառումը,</p> <p>3. ներկայացնի հիմնական և օժանդակ տնտեսությունների կազմակերպման հիմունքները:</p>
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարարմակարգակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել տնտեսության (կազմակերպության) բնութագրի, տիպերի, ստեղծման և գրանցման կարգը
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է բացատրում «տնտեսություն» և «կազմակերպություն» հասկացությունները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում տնտեսության (կազմակերպության) բնութագիր կազմելու սկզբունքները,</p> <p>3) ճիշտ է բնութագրում տնտեսությունների (կազմակերպությունների) տիպերը և դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում տնտեսության (կազմակերպության) ստեղծման և գրանցման կարգը,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում մասնավոր մեղվանոցների և տոհմային մեղվաբուծական տնտեսությունների աշխատանքների կազմակերպման իրավական հիմքերը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի բացատրել «տնտեսություն» և «կազմակերպություն» հասկացությունները, ներկայացնել տնտեսության (կազմակերպության) բնութագիր կազմելու սկզբունքները, տնտեսությունների (կազմակերպությունների) տիպերը և դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները: Կառաջադրվի նաև ներկայացնել տնտեսության (կազմակերպության) ստեղծման և գրանցման կարգն ու մասնավոր մեղվանոցների և տոհմային մեղվաբուծական տնտեսությունների աշխատանքների կազմակերպման իրավական հիմքերը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները և ճիշտ է լրացնում թեստային առաջադրանքների 60 %-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնամեթոդական գրականություն, ձեռնարկներ, ուղեցույցներ, օրենսդրական ակտերի ու հոդվածների համապատասխան փաթեթներ և այլն:

<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 8 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել աշխատանքի և աշխատավարձի կազմակերպման հիմունքները և աշխատավարձի նորմերի հաշվառումը
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում աշխատանքի տեխնիկական նորմատիվների սահմանման կարևորությունն աշխատանքի կազմակերպման գործընթացում, 2) ճիշտ է ներկայացնում աշխատանքի նորմերի տարրերը՝ միաժամանակ հաշվելով նորմի մեծությունը, 3) ճիշտ է ներկայացնում աշխատանքի վարձատրության կազմակերպման համակարգի տարրերի էությունը, 4) ճիշտ է բնութագրում աշխատանքի վարձատրության ձևերի առանձնահատկությունները՝ միաժամանակ հաշվելով աշխատավարձի նորմի մեծությունը:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել աշխատանքի տեխնիկական նորմատիվների սահմանման կարևորությունն աշխատանքի կազմակերպման գործընթացում, աշխատանքի նորմերի տարրերը՝ միաժամանակ հաշվելով նորմի մեծությունը, աշխատանքի վարձատրության կազմակերպման համակարգի տարրերի էությունը: Կառաջադրվի նաև բնութագրել աշխատանքի վարձատրության ձևերի առանձնահատկությունները՝ զուգընթաց հաշվելով աշխատավարձի նորմի մեծությունը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ճիշտ է կատարում թեստային հանձնարարությունների 70 %-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ և ուղեցույցներ, աշխատավարձերի հաշվառման ու գրանցման բլանկեր:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել հիմնական և օժանդակ տնտեսությունների կազմակերպման հիմունքները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է բացատրում մեղվաբուծական տնտեսությունների կազմակերպման ձևերը և դրանց ներկայացվող պահանջները,

	<p>2) ճիշտ է բացատրում մեղվաբուծական տնտեսության ստորաբաժանումների ձևավորման սկզբունքները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում մեղվաբուծական գլխամասային տնտեսության գործընթացների կազմակերպման հիմունքները,</p> <p>4) ճիշտ է իրականացնում մեղվաբուծական գլխամասային տնտեսության աշխատանքների ընթացիկ հսկողությունը և վերջնարդյունքների գնահատումը,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում մեղվաբուծական օժանդակ տնտեսության գործընթացների կազմակերպման հիմունքները,</p> <p>6) ճիշտ է իրականացնում մեղվաբուծական օժանդակ տնտեսության աշխատանքների ընթացիկ հսկողությունը և վերջնարդյունքների գնահատումը:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:</p> <p>Ուսանողին կհանձնարարվի բացատրել մեղվաբուծական տնտեսությունների կազմակերպման ձևերը և դրանցից յուրաքանչյուրին ներկայացվող պահանջները, մեղվաբուծական գլխամասային ու օժանդակ տնտեսությունների ստորաբաժանումների ձևավորման սկզբունքները, դրանց աշխատանքային գործընթացների կազմակերպման հիմունքները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները և ճիշտ է լրացնում թեստային առաջադրանքների 60 %-ից ավելին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, օրենսդրական ակտերի ու հոդվածների համապատասխան փաթեթներ և այլն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 8 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՂՎԱԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԵՂ – 5 – 13 – 009
<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Այս մոդուլի նպատակն է՝ ուսանողի մեջ ձևավորել գիտելիքներ մեղվաընտանիքների խնամքի ժամանակակից և արդյունավետ տեխնոլոգիաների մասին: Ուսանողը պետք է կարողանա կազմակերպել մեղվամթերքների խնամքը՝</p>

	տարվա եղանակին ու բնակլիմայական պայմաններին համապատասխան, ճիշտ օգտագործել ձեռքի տակ եղած հնարավորությունները և միջոցները:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական պարապմունք՝ 48 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՄԵՂ - 5 - 13 - 002 «Մեղուների կենսաբանությունը և կենսատարածքի էկոլոգիան», ՄԵՂ - 5 - 13 - 003 «Մեղվաընտանիքների կազմը» և ՄԵՂ - 5 - 13 - 006 «Մեղվաբուծական գույքը, գործիքները և սարքավորումները» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի մեղվաընտանիքների խնամքի ընդհանուր դրույթները, 2. բնութագրի ուժեղ մեղվաընտանիք ստեղծելու պայմանները, 3. գնահատի մեղվափեթակի ներքին պայմանները և թվարկի դրանց բարելավման միջոցառումները, 4. նկարագրի մեղվաընտանիքների պահվածքը և խնամքն ըստ տարվա եղանակների կազմակերպելու սկզբունքները, 5. բնութագրի մեղվաընտանիքների պահվածքի և խնամքի առանձնահատկությունները՝ կախված նրանց ցեղատեսակից ու կենսատարածքի գիտատնտեսական նշանակությունից:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել մեղվաընտանիքների խնամքի ընդհանուր դրույթները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում մեղվաընտանիքների խնամքի տեխնոլոգիաները և դրանց առանձնահատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում մեղվաընտանիքների զննման գործընթացը, 3) ճիշտ է բացատրում մեղուների հետ աշխատանքի ընդհանուր կանոնները, 4) ճիշտ է բացատրում մեղուների գողության դեպքերը և դրա դեմ պայքարի հիմնական միջոցառումները, 5) ճիշտ է ներկայացնում մեղուներին անհրաժեշտ ածխաջրածնային կերակրատեսակները և դրանց չափաբաժիններն ըստ

	<p>տարվա եղանակների ու վերընթաց լանդշաֆտային գոտիների,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում մեղուներին անհրաժեշտ սպիտակուցային կերակրատեսակները և դրանց չափաբաժիններն ըստ տարվա եղանակների ու վերընթաց լանդշաֆտային գոտիների:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:</p> <p>Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել մեղվաընտանիքների խնամքի տեխնոլոգիաները և դրանց առանձնահատկությունները, մեղվաընտանիքների զննման գործընթացը, բացատրել մեղուների հետ աշխատանքի ընդհանուր կանոնները, մեղուների գողության դեպքերն ու դրա դեմ պայքարի հիմնական միջոցառումները: Կհանձնարարվի ներկայացնել մեղուներին անհրաժեշտ ածխաջրածնային ու սպիտակուցային կերակրատեսակները և դրանց չափաբաժիններն ըստ տարվա եղանակների ու վերընթաց լանդշաֆտային գոտիների: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները և ճիշտ է լրացնում թեստային առաջադրանքների 60 %-ից ավելին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, մեղուների համար նախատեսված ածխաջրածնային ու սպիտակուցային կերակրատեսակների ցանկ և այլն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Բնութագրել ուժեղ մեղվաընտանիք ստեղծելու պայմանները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է բնութագրում ուժեղ մեղվաընտանիքի նախանշանները,</li> <li>2) ճիշտ է թվարկում ուժեղ մեղվաընտանիք ձևավորելու նախապայմանները,</li> <li>3) ճիշտ է մեկնաբանում նոր մեղվաընտանիք կազմակերպելու անհրաժեշտության հիմքերը,</li> <li>4) ճիշտ է պարզաբանում արհեստական ձագատվության (պարսատվության) առավելությունները,</li> <li>5) ճիշտ է պարզաբանում բնական ձագատվության թերությունները,</li> <li>6) ճիշտ է ներկայացնում մեղվաընտանիքները տեղափոխելու ժամկետները և առավել անվտանգ միջոցները,</li> </ol>

	7) ճիշտ է ներկայացնում մեղվափեթակները տեղադրելու և հավաքելու ժամկետները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի բնութագրել ուժեղ մեղվալնտանիքի նախանշանները, մեկնաբանել նոր մեղվալնտանիք կազմակերպելու անհրաժեշտության հիմքերը, պարզաբանել արհեստական ձագատվության (պարսատվության) առավելությունները, բնական ձագատվության թերությունները: Կառաջադրվի նաև ներկայացնել մեղվալնտանիքները տեղափոխելու ժամկետները, մեղվափեթակները տեղադրելու ու հավաքելու ժամկետները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները և ճիշտ է լրացնում թեստային առաջադրանքների 60 %-ից ավելին:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, սխեմատիկ գծապատկերներ և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Գնահատել մեղվափեթակի ներքին պայմանները և թվարկել դրանց բարելավման միջոցառումները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է գնահատում մեղվափեթակի չափերը և հարմարավետությունը, 2) ճիշտ է գնահատում մեղվափեթակի ներսի ջերմային պայմանները՝ ներկայացնելով դրանց բարելավման հիմնական միջոցառումները, 3) ճիշտ է գնահատում մեղվափեթակի ներսի խոնավացման պայմանները՝ ներկայացնելով դրանց բարելավման հիմնական միջոցառումները, 4) ճիշտ է ներկայացնում մեծ քանակի սնունդ աճեցնելու (բուծելու) համար մեղվափեթակի ներսում առավել նպաստավոր (օպտիմալ) պայմանները և դրանց ապահովման հիմնական միջոցառումները, 5) ճիշտ է մեկնաբանում առանձին մեղվալնտանիքների արագ զարգացման և բնական ձագատվության պատճառները:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գնահատել մեղվափեթակի չափերը, հարմարավետությունը, ներսի ջերմային պայմանները՝

	<p>ներկայացնելով դրանց բարելավման հիմնական միջոցառումները: Կառաջադրվի նաև մեկնաբանել մեղվափեթակի ներսի խոնավացման պայմանները՝ ներկայացնելով դրանց բարելավման հիմնական միջոցառումները, ինչպես նաև մեծ քանակի սնունդ աճեցնելու (բուծելու) համար մեղվափեթակի ներսում առավել նպաստավոր (օպտիմալ) պայմանները և դրանց ապահովման հիմնական միջոցառումները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները և ճիշտ է լրացնում թեստային առաջադրանքների 60 %-ից ավելին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ և այլն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Նկարագրել մեղվաընտանիքների պահվածքը և խնամքն ըստ տարվա եղանակների կազմակերպելու սկզբունքները</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է նկարագրում մեղվաընտանիքների պահվածքի և խնամքի առանձնահատկությունները ծմռանը,</li> <li>2) ճիշտ է նկարագրում մեղվաընտանիքների պահվածքի և խնամքի առանձնահատկությունները գարնանը,</li> <li>3) ճիշտ է նկարագրում մեղվաընտանիքների պահվածքի և խնամքի առանձնահատկություններն ամռանը,</li> <li>4) ճիշտ է նկարագրում մեղվաընտանիքների պահվածքի և խնամքի առանձնահատկություններն աշնանը:</li> </ol>
<b>Գնահատման միջոցը</b>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նկարագրել մեղվաընտանիքների պահվածքի և խնամքի առանձնահատկությունները ծմռանը, գարնանը, ամռանը և աշնանը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում է գործնական հանձնարարությունները և ճիշտ է լրացնում թեստային առաջադրանքների 60 %-ից ավելին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, մեղվաընտանիքների պահվածքի ու խնամքի հանձնարարականների փաթեթներ և այլն:</p>

<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Բնութագրել մեղվաընտանիքների պահվածքի և խնամքի առանձնահատկությունները՝ կախված նրանց ցեղատեսակից ու կենսատարածքի գիտատնտեսական նշանակությունից
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է բնութագրում հայկական դեղին մեղվի պահվածքի և խնամքի առանձնահատկությունները, 2) ճիշտ է բնութագրում լեռնային գորշ մեղվի պահվածքի և խնամքի առանձնահատկությունները, 3) ճիշտ է բնութագրում ռուսական անտառային և հեռավորարևելյան ցեղատեսակների մեղվաընտանիքների պահվածքի ու խնամքի առանձնահատկությունները, 4) ճիշտ է ներկայացնում մեղուների պահվածքը և խնամքը արգելանոցային պայմաններում, 5) ճիշտ է ներկայացնում մեղուների պահվածքը և խնամքը փորձակայաններում, 6) ճիշտ է ներկայացնում մեղուների պահվածքը և խնամքը տոհմային մեղվաբուծարաններում:
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի բնութագրել հայկական դեղին մեղվի, լեռնային գորշ մեղվի, ռուսական անտառային և հեռավորարևելյան ցեղատեսակների մեղվաընտանիքների պահվածքի ու խնամքի առանձնահատկությունները: Կառաջադրվի ներկայացնել մեղուների պահվածքը և խնամքը արգելանոցային պայմաններում, փորձակայաններում ու տոհմային մեղվաբուծարաններում, մեկնաբանել դրանց տարբերությունները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները և ճիշտ է լրացնում թեստային առաջադրանքների 60 %-ից ավելին::
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ, մշակումներ, հանձնարարականներ և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 12 ժամ
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ ԵՎ ՄԵՂՈՒՆԵՐԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ»</b>	



<b>Մոդուլի դասիչը</b>	ՄԵՂ – 5 – 13 – 010
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլի նպատակն է՝ ուսանողի մեջ ձևավորել գիտելիքներ մեղվաբուծության մեթոդների, մեղուների բազմացման և մայրաբուծության մասին: Ուսանողը պետք է կարողանա բնութագրել մեղվաբուծական տարբեր մեթոդների սկզբունքային առանձնահատկությունները և տարբերությունները, տիրապետի մեղուների բազմացման ու մայրաբուծության ժամանակակից մասնագիտական կարողություններին:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ տեսական ուսուցում՝ 24 ժամ գործնական պարապմունք՝ 30 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ՄԵՂ - 5 - 13 - 001 «Մեղվաբուծության զարգացման պատմությունը», ՄԵՂ - 5 - 13 - 006 «Մեղվաբուծական գույքը, գործիքները և սարքավորումները» և ՄԵՂ - 5 - 13 - 009 «Մեղվաընտանիքների խնամքը» մոդուլները:
<b>Ուսումնառության արդյունքները</b>	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. 1. ներկայացնի մեղվաբուծության ավանդական և ոչ ավանդական մեթոդները, 2. ներկայացնի մեղվաընտանիքների պահվածքի առանձնահատկություններն՝ ըստ մեղվաբուծական տարբեր մեթոդների, 3. բնութագրի մեղուների բազմացման եղանակները, դրանց ժամկետները և առանձնահատկությունները, 4. ներկայացնի մայրաբուծության ընդհանուր բնութագիրը:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել մեղվաբուծության ավանդական և ոչ ավանդական մեթոդները
<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում մեղվամթերքների ստացմանը միտված մեղվաբուծական մեթոդը և դրա կիրառման առանձնահատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում ծաղիկների փոշոտման կազմակերպմանը միտված մեղվաբուծական մեթոդը և դրա կիրառման առանձնահատկությունները,

	<p>3) ճիշտ է ներկայացնում մեղուների բազմացմանը և նոր մեղվաընտանիքների կազմավորմանը միտված մեղվաբուծական մեթոդն ու դրա կիրառման առանձնահատկությունները,</p> <p>4) ճիշտ է բնութագրում գիտահետազոտական (տոհմաբուծական, ցեղաբուծական և այլն) նպատակներ հետապնդող մեղվաբուծական մեթոդը և դրա կիրառման առանձնահատկությունները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում խառը բնույթի մեղվաբուծական մեթոդը և դրա կիրառման առանձնահատկությունները:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, խմբային աշխատանքների և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել մեղվամթերքների ստացմանը, ծաղիկների փոշոտման կազմակերպմանը, մեղուների բազմացմանը և նոր մեղվաընտանիքների կազմավորմանը միտված, ինչպես նաև գիտահետազոտական (տոհմաբուծական, ցեղաբուծական և այլն) նպատակներ հետապնդող մեղվաբուծական մեթոդներն ու դրանց կիրառման առանձնահատկությունները: Կառաջադրվի նաև ներկայացնել խառը բնույթի մեղվաբուծական մեթոդը և դրա կիրառման առանձնահատկությունները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ և այլն:
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել մեղվաընտանիքների պահվածքի առանձնահատկություններն՝ ըստ մեղվաբուծական տարբեր մեթոդների
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում մեղվաընտանիքների պահվածքը մեղվամթերքների ստացման մեղվաբուծությունում,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում մեղվաընտանիքների պահվածքը ծաղիկների փոշոտման մեղվաբուծությունում,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում մեղվաընտանիքների պահվածքը մեղուների բազմացման մեղվաբուծությունում,</p> <p>4) ճիշտ է բնութագրում մեղվաընտանիքների պահվածքը գիտահետազոտական մեղվաբուծությունում,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում մեղվաընտանիքների պահվածքը խառը բնույթի մեղվաբուծությունում:</p>
<b>Գնահատման միջոցը</b>	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:

	<p>Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել մեղվաընտանիքների պահվածքը մեղվամթերքների ստացման, ծաղիկների փոշոտման և մեղուների բազմացման մեղվաբուծությունում: Կառաջադրվի բնութագրել մեղվաընտանիքների պահվածքը գիտահետազոտական մեղվաբուծությունում, ինչպես նաև ներկայացնել մեղվաընտանիքների պահվածքը խառը բնույթի մեղվաբուծությունում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին, ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները և ճիշտ է լրացնում թեստային առաջադրանքների 70 %-ից ավելին:</p>
<b>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</b>	<p>Արդյունքի յուրացումն իրականացվում է տեսական պարապմունքների, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնամեթոդական ձեռնարկներ, ուղեցույցներ և այլն:</p>
<b>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</b>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
